

Հիմնական լրակազմի "ՀԱ" մակնիշի աշխատանքային գծագրերի ամփոփագիր

Թերթ	Անվանում	Ծանոթագրութ.
1	Ընդհանուր տվյալներ	
2	Սարքավորումների և նյութերի մասնագիր	
3	Հրդեհային ազդասարքերի բաշխման ցանցերի սխեմա	
4	Ազդասարքերի միացումների սխեմա	
5	Հրդեհային ազդասարքերի բաշխումը նկուղի հատակագծում	
6	Հրդեհային ազդասարքերի բաշխումը 1-ին հարկի հատակագծում	
7	Հրդեհային ազդասարքերի բաշխումը 2-րդ հարկի հատակագծում	

Առաջարկվող և վկայակոչվող փաստաթղթերի ամփոփագիր

Նշանակում	Անվանում	Ծանոթագր.
	<u>Վկայակոչվող փաստաթղթեր</u>	
ՀՀՇՆ II - 8.04.01-97	Հրդեհի ազդարարման սարքավորանքներ:	
ՀՀՇՆ II - 8.04.02-05	Հրդեհի ազդարարման սարքավորանքներ:	
НПБ 88 - 01	Հրդեհի ազդարարման սարքավորանքներ:	ոդ

Աշխատանքային նախագիծը մշակված է գործող նորմաների ու կանոնների համաձայն:

ՆԳԻԱ. Արուսյան Ս.

Ընդհանուր ցուցումներ

Դպրոցի ինքնաշխատ հրդեհային ազդասարքերի սույն նախագծի մշակման համար ծառայել են հետևյալ ելակետային փաստաթղթերը.

- շենքի հարկերի հատակագծերը Մ 1:200,
- նախագծային առաջադրանքը:

Ինքնաշխատ հրդեհային ազդասարքերը նախատեսված են հսկվող տարածքներում հրդեհի հայտնաբերման, տագնապի ազդարարման և համապատասխան ծառայությոններին տեղեկացնելու համար:

Որպես ընդունիչ - հսկիչ սարքավորում ընդունված է ՌԴ արտադրության РУДИН-8П տիպի հրդեհապաշտպանիչ սարքը, որը ապահովում է հրդեհային շլեյֆների շուրջօրյա հսկողությունը: Որը սարքավորված է 125 քայլի հիշողությամբ, ուր գրանցվում են տագնապները, հոսանքազրկումները և այլն:

Ընդունիչ - հսկիչ սարքավորումը նախատեսված է տեղակայել տնօրենի աշխատասենյակում` պատի վրա: Սարքավորման վրա օգտագործված է 7 ճառագայթ:

Որպես հրդեհային կետային ազդասարքեր ընդունված են ծխային NCHM - 601PC XIAMEH տիպի տվիչ - սարքերը: Միևնույն ճառագայթի մեջ գտնվող ազդասարքերի հիմքերի ռելեների նորմալ փակ կոնտակտները հաջորդաբար միացվում են այնպես, որ ազդասարքի հանելը հիմքից կամ ազդասարքի գործարկումը խզի շլեյֆի ամբողջականությունը, որն էլ ընդունիչ - հսկիչ սարքավորման կողմից կընդունվի որպես «ՏԱԳՆԱՊ»: Ծխային ազդասարքերը տեղադրվում են առաստաղի վրա:

Հրդեհի ազդարարման տագնապի լուսաձայնային ազդարարիչը նախատեսված է տեղադրել շենքի գլխավոր մուտքի մոտ, նկուղային և 2-րդ հարկերում պատին:

Ինքնաշխատ հրդեհային ազդասարքերի էլեկտրասնուցումը նախատեսված է համայնքի տնօրենի աշխատասենյակում գործող ~220 V լարման ցանցից: Ընդունիչ - հսկիչ սարքավորման սնուցումը կատարվում է СКАТ-1200 տիպի անկախ սնուցման աղբյուրից PRN-2x0.75 մմ² մակնիշի մալուխագծով:

Ինքնաշխատ հրդեհային ազդասարքերի բաշխման 12 V լարման ցանցերն ընդունված են CABS-2x0.22 մմ² և CABS- 4x0.22 մմ² մալուխագծերով, անցկացրած` առաստաղով փակ- սվաղի տակ ամրակցումներով, պատերով սակառի միջով:

ՏՈՒԽ	Ս. ԱՐԱՅԱՆ		ԱՆԹԱԼԱՅԻ ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ				
ՄՏ	Ս. ԱՐԱՅԱՆ						
ՄԻ	Ս. ԱՐԱՅԱՆ					ՓՈՒԼ	
ՄԱԿՈՒՑ	Ս. ՎԵՐԵՅԱՆ					ԼՆ	
			ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ			«ՇԻՆԵՔՐՈՒՄ»	ՈՐԸ
						ք. Վանաձոր	2016թ.